ՀՀ ԳԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 29-ին տեղի ունեցավ ՀՀ Գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը։ Այն ներածական խոսքով բացեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը։ Նա ներկայացրեց ակադեմիայի անցյալ տարվա գործունեությունը, խոսեց հայրենական գիտության հիմնական ուղղությունների, դրանց առաջընթացը խոչընդոտող պատճառների, հնացած մտակաղապարների վճռական հաղթահարման մասին, ուրվագծեց ճշգրիտ գիտությունների հիմնարար խնդիրների շրջանակը, արժեքավորեց տարբեր ճյուղերի ձեռքբերումներն ու զարգացման հեռանկարները։ Վերջում առանձնակի նշեց հայ մշակույթի, նրա ողջ համակարգի բարոյահոգևոր ինքնությունը պահպանելու, հայերեն լեզվի՝ որպես երիտասարդության ազգային կրթության հիմնամիջոցի ու նպատակի, զարգացման անհրաժեշտությունը։

ՀՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Բ. Բարխուդարյանը հանդես եկավ «Հայաստանի գիտությունների ակադեմիայի 1990 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքները» զեկուցումով։ Հաշվետու տարվա գիտական արդյունքները ներկայացնելուց հետո, զեկուցողը անդրադարձավ նոր պայմաններում գիտական աշխատանքները կազմակերպելու և դրանք կատարելագործելու հրատապ խնդիրներին։ Մասնավորապես նշեց, որ ԳԱ-ն կարող է լիարժեք ծառայել իր կոչմանը, եթե ստանա համապատասխան կարգավիճակ և օժանդակություն։

Ընդհանուր ժողովում քննարկվեց հարցերի շուրջ ծավալվեց ակտիվ բանավեճ, որին մասնակցեցին Գ. Գուրզադյանը, Դ. Մ. Սեդրակյանը, Գ. Ա. Գալոյանը, Ս. Ռ. Կոստանդիկյանը, Ա. Ռ. Մկրտչյանը, Ռ. Ա. Ղազարյանը, Գ. Բ. Ջանուկյանը, Ռ. Հովհաննիսյանը, Ա. Աղաբեկյանը, Ա. Հովհաննիսյանը։

ՀԳԱ գիտահետազոտական ինստիտուտի կանոնադրության հիմնադրույթների, ՀԳԱ կանոնադրության, ՀԳԱ բաժանմունքի և ՀԳԱ ընտրությունների կանոնակարգերի նախագծերի քննարկման ու հաստատման մասին զեկուցումով հանդես եկավ ՀԳԱ փոխպրեզիդենտ, ՀԳԱ ակադեմիկոս Գ. Մ. Սեդրակյանը։ Քննարկմանը մասնակցեցին Է. Ռ. Աղայանը, Ռ. Մ. Մարտիրոսյանը, Ա. Ռ. Հ[illegible]ը, Դ. Ա. Բրուտյանը, Մ. Գ. Ներսիսյանը, Մ. Լ. Տեր-Միքայելյանը, Դ. Բ. Ջանուկյանը, Գ. Ա. Գալոյանը, Ս. Հ. Մովսիսյանը, Ս. Ա. Համբարձումյանը։

«Վերնային Ղարաբաղում և հարակից հայաբնակ վայրերում իրադարձությունների կըտրուկ սրման կապակցությամբ ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովին հեռադիր հղելու մասին» հարցի շուրջ հանդես եկավ ՀԳԱ փոխպրեզիդենտ Գ. Ա. Գալոյանը։

Ընդհանուր ժողովը դատապարտեց հայաթափման ու արցախահայության բռնի տեղահանման՝ կենտրոնի որդեգրած քաղաքականությունը և որոշեց հեռադիր հղել ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովին։

«Հայաստանի գիտությունների ակադեմիայի կարգավիճակի մասին» զեկուցումով հանդես եկավ փոխպրեզիդենտ Դ. Մ. Սեդրակյանը։

Ընդհանուր ժողովը որոշեց ՀՀ Գերագույն խորհրդին դիմել արագացնելու Հայաստանի ԳԱ կարգավիճակի քննարկումը։ Դ. Մ. Սեդրակյանը հանգամանալից հաղորդում տվեց ՀԳԱ ինստիտուտների աշխատանքի պայմանագրային ձևին անցնելու հետ կապված դժվարությունների մասին։

ՀԳԱ ընդհանուր ժողովը որոշեց, որ ի փոփոխումն «ՀԳԱ հիմնարկներում վարձատրության նոր համակարգին անցնելու մասին» ՀԳԱ նախագահության և ԳԱ արհմիութենական միացյալ կոմիտեի 1991 թ. մարտի 8-ի համատեղ որոշման 5-րդ ենթակետի, թույլատրել ՀԳԱ ինստիտուտներին ըստ պատրաստության անցնել պայմանագրային համակարգի։

Ելույթ ունեցողները նշեցին, որ անցումը այդ հիմնաձևին կապված է բազմաթիվ դժվարությունների, մասնավորապես, լուրջ կառուցվածքային փոփոխությունների, մինչև 20 % հասնող կրճատումների հետ։

Սկզբունքային բանավեճ ծավալվեց ժամանակակից հայոց լեզվի ուղղագրությունը փոխելու հարցի շուրջ։ Հարցի քննարկմանը մասնակցեցին Է. Ա. Աղայանը, Գ. Բ. Ջանուկյանը, Հ. Ս. Թամրազյանը, Գ. Ե. Ավագյանը, Ռ. Ա. Ղազարյանը։ Որոշվեց նամակ հղել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին, որի մեջ արտահայտել ակադեմիական մտավորականության խոր մտահոգությունը հայոց լեզվի ուղղագրությունը փոխելու առաջարկների վերաբերյալ։

ՀՀ ԳԱ հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին առաջարկությամբ հանդես եկավ ՀՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը: Որոշվեց ընդհանուր ժողով հրավիրել՝ 1991 թ. մայիսի վերջին և սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում՝ արդի քաղաքական կացության, ԽՍՀՄ-ի կազմի մեջ հանրապետության մնալու կամ չմնալու նկատմամբ դիրքորոշումները պարզորոշելու նպատակով։

ՀՀ ԳԱ ընդհանուր ժողովը բաց քվեարկությամբ ՀՀ ԳԱ պատվավոր անդամ ընտրեց Ամենայն Հայոց կաթողիկոս, Նորին Ս. Օծություն, Տ. Տ. Վազգեն Առաջինին։

ՀՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 25-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1990 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱ թղթակից անդամ Հ. Ռ. Սիմոնյանը:

ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքը, ինչպես հայտնի է, իր կառուցվածքի մեջ ընդգրկում է վեց գիտական հաստատություն, որոնց ներդրած ավանդը գիտության համապատասխան ճյուղի մեջ հաշվետու տարում, բնականաբար, միարժեք չի եղել, ասաց նա։ Այդ հիմնարկներից յուրաքանչյուրի գիտական գործունեության գնահատումը պահանջում է տարբերակված մոտեցում՝ ելնելով ինչպես տվյալ հիմնարկի գիտական կարողություններից, այնպես էլ նրա գործունեության առանձնահատկություններից։ Այնուհետև, Հ. Ռ. Սիմոնյանը հանգամանորեն խոսեց բաժանմունքի հիմնարկների՝ պատմության, տնտեսագիտության, հնագիտության և ազգագրության, արևելագիտության ինստիտուտների, ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի, սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի, բաժանմունքի բյուրոյի, խորհուրդների գործունեության մասին, նշեց դրանցից յուրաքանչյուրի արդիական ներդրումները՝ ավարտված ու մշակված թեմաներն ու պրոբլեմները, թվարկեց կազմակերպված գիտական նստաշրջաններն ու գիտաժողովները, անդրադարձավ միջազգային գիտական կապերին, ինստիտուտների գիտական գործունեության առաջիկա ծրագրերին, գիտական կադրերի պատրաստման պրոբլեմներին, խոսեց ինստիտուտների գիտակազմակերպական գործունեության և կառուցվածքային փոփոխությունների իրականացման, նյութատեխնիկական ծանր վիճակի մասին. նշեց նրանց աշխատանքներում առկա թերությունները ու չլուծված հարցերը, տվեց յուրաքանչյուր հիմնարկի աշխատանքի գնահատականը։

Մասնավորապես, անդրադառնալով սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնի գործունեության արդյունավետությանը, զեկուցողը այն գնահատեց անբավարար։ Բաժնի անբավարար աշխատանքի մասին է վկայում թեկուզ այն փաստը, ասաց նա, որ ամեն տարի բաժնի կողմից ներկայացվող հաշվետվությունները շատ նման են լինում իրար, իսկ 1990 և 1991 թթ. հաշվետվությունները կարծես երկվորյակներ լինեն, բաժնում կատարվող գրեթե բոլոր աշխատանքները ընթանում են սահմանված ժամկետների զգալի խախտումներով։

Բաժանմունքի և պատմության ինստիտուտի ջանքերով, ինչպես և հասարակական գիտությունների գիտական հիմնարկների գործուն մասնակցությամբ ապրիլի 17—20-ը կայացավ «Հայերի ցեղասպանություն. պատմություն, տեսություն, քաղաքական պատասխանատվություն» միջազգային գիտաժողովը՝ նվիրված 1915 թ. հայերի ցեղասպանության 75-ամյակին։ Գիտաժողովին մասնակցում էին 42 գիտնականներ 15 երկրներից։ Մասնակիցների մեջ էին ցեղասպանության գծով ականավոր մասնագետներ, ինչպես նաև ցեղասպանությունը ուսումնասիրող կառավարական և գիտահուշային կենտրոնների և ինստիտուտների տնօրեններ, փորձագետներ, որոնք ՍԱԿ են ներկայացնում հայերի ցեղասպանության նյութերը։

Հաշվետու զեկուցման շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ՀՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Խ. Սարգսյանը, Ռիչարդ Հովհաննիսյանը, Բ. Ն. Առաքելյանը, Մ. Խ. Քոթանյանը, Գ. Բ. Ղարիբջանյանը, Մ. Գ. Ներսիսյանը, ՀՀ ԳԱ թղթակից անդամներ Շ. Խ. Մնոյանը, Լ. Ա. Խուրշուդյանը, Հ. Ա. Ավետիսյանը, Մ. Կ. Զուլալյանը, գիտության դոկտորներ Գ. Ա. Տիրացյանը, Ա. Ա. Մխիթարյանը, Վ. Ա. Միքայելյանը, Կ. Լ. Դալլաքյանը, Գ. Բ. Պետրոսյանը, գիտության թեկնածու Գ. Ե. Արեշյանը։ Նրանք հավանություն տվեցին հաշվետու զեկուցմանը, բաժանմունքի գործունեությունը գնահատեցին բավարար, բաժանմունքի գործունեության բարելավմանն ուղղված մի շարք առաջարկություններ արեցին։ Ելույթ ունեցողները, մասնավորապես, ասացին, որ ինստիտուտները գիտահետազոտական գործունեության ընթացքում պետք է առաջնորդվեն

միմիայն դիտական նկառատումներով, պետք է փնտրվեն դիտական որակյալ կադրերի պատրաստման համար նոր, արդյունավետ ուղիներ, նշվեց ինստիտուտների և հրատարակչական բազայի ամրապնդման, դիտական միջնտական կապերի ստեղծման, Բուրքական պատմագրության մեջ հայ ժողովրդի պատմության խեղաթյուրումների դեմ պայքարի ուժեղացման անհրաժեշտությունը և այլն։ Առաջադրվեցին հանրապետության մտավորականությանը հուզող այլ հարցեր։

Ժողովում «Պատմագիտության արդի խնդիրները» զեկուցումով հանդես եկավ ՀՀ ԳԱ թղթակից անդամ Լ. Ա. Խուրշուդյանը։ «Գյուղատնտեսության և գյուղի զարգացման արդի պրոբլեմները» թեմայով զեկուցում կարդաց տնտեսագիտության թեկնածու Հ. Պ. Ֆահրադյանը։

Այնուհետև ՀԳԱ ակադեմիկոս-քարտուղար Վ. Բ. Բարխուդարյանը հաղորդում տվեց պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի ընտրությունների մասին։ Արտահայտվեցին Լ. Ա. Խուրշուդյանը, Գ. Խ. Սարգսյանը, Մ. Խ. Հովսեփյանը, Վ. Ե. Խոջաբեկյանը։ Ելնելով ՀԳԱ բաժանմունքների միավորման հնարավորությունից, որոշվեց նպատակահարմար չհամարել բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի նոր ընտրությունների անցկացումը։ Նկատի ունենալով, որ ՀԳԱ թղթակից անդամ Հ. Ռ. Սիմոնյանը ծանրաբեռնված է Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահի և ՀՀ խորհրդարանի պատգամավորի իր պարտականություններով, բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի ընթացիկ պարտականությունների կատարումը դնել բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ՀԳԱ թղթակից անդամ Լ. Ա. Խուրշուդյանի վրա։

ՀՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 25-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի 1990 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը։ Հաշվետու տարում, ասաց նա, բաժանմունքի գիտակազմակերպական գործունեությունը հիմնականում ընթացել է համաշխարհային դիտության, դեպի անկախություն իր ճանապարհն ընտրած հայ ժողովրդի ազգային շահերի, Հայաստանի Հանրապետության քաղաքական և սոցիալական իրավիճակի անմիջական արձագանքման, հայ մշակույթի պատմության սպիտակ բծերի լուսաբանման անհրաժեշտության լույսի ներքո բաժանմունքի ինստիտուտների դիտահետազոտական աշխատանքների արմատական վերակառուցման ուղղությամբ։ 1990 թ. բաժանմունքն անցկացրել է 5 ընդհանուր ժողով և բյուրոյի 18 նիստ։

Բաժանմունքը ՀԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի հետ անցկացրել է դիտական նստաշրջան՝ նվիրված Գ. Սրվանձտյանի ծննդյան 150-ամյակին։ 1990 թ., շարունակեց զեկուցողը, կայացել է բաժանմունքի ինստիտուտների դիտխորհուրդների 30 նիստ, որտեղ լսվել և քննարկվել են դիտական զեկուցումներ, դիտակազմակերպական հարցեր, դիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքն ու հետագա խնդիրները փիլիսոփայության, իրավունքի, հոգեբանության, բանասիրության, արվեստաբանության ընագավառներում։ Այդ դիտահետազոտական աշխատանքներն ընթացել են 23 պրոբլեմների ուղղությամբ, որոնց շրջանակներում մշակվել են 38 թեմա, որից ավարտվել է 13-ը։ Գ. Բրուտյանը նշեց, որ ինստիտուտների աշխատանքներում տեղ են գտել մի շարք թերություններ, բավարար չեն հետազոտությունները հայ փիլիսոփայության պատմության, լեզվի և արվեստի գծով բառարանների կազմման, սփյուռքահայ գրականության, անցյալում՝ հանիրավի արգելված հեղինակների երկերի գնահատման և քննական ընագրերի հրատարակման ընագավառում։ Զեկուցողը, անդրադառնալով բաժանմունքի ինստիտուտների գծով աշխատությունների հրատարակման ընթացքին, նշեց, որ այդ ուղղությամբ վիճակը անչափ ծանր է։ Ինստիտուտները հրատարակել են 16 անուն գիրք և 100 հոդված։ Դեռևս հրատարակված չեն 60-ից ավելի աշխատություն, որոնք գտնվում են հրատարակչությունում։

Այնուհետև Գ. Բրուտյանը հանգամանորեն անդրադարձավ միջազգային գիտական կապերին, բարձրորակ գիտական կադրերի պատրաստման ուղղությամբ տարվող աշխատանքներին։

Բաժանմունքի իսկական անդամների և թղթակից անդամների 1990 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցեց բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ՀՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ջանուկյանը։

Փիլիսոփայության, բանասիրության և արվեստի բնագավառում հանրապետության բուհերի 1990 թ. հետազոտությունների արդյունքներին և կոորդինացման խնդիրներին անդրադարձավ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ, ՀՀ ԳԱ ակադեմիկոս է. Մ. Ջրբաշյանը:

Զեկուցումների շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին և ելույթ ունեցան է. Բ. Աղայանը, Հ. Ս. Թամրազյանը. Լ. Հ. Հախվերդյանը, Ս. Բ. Կապուտիկյանը, է. Ի. Աբայանը, Ս. Ս. Սարինյանը, Ս.Ս. Արևշատյանը. Վ. Ս. Նալբանդյանը: Նրանք բաժանմունքի 1990 թ. գործունեությունը գնահատեցին բավարար՝ ընդգծելով նրա դերը հայագիտության հետագա զարգացման ուղղությամբ կատարվելիք աշխատանքներում: Հատուկ նրվեց հանրապետության զեկավար շրջաններում հայոց լեզվի ուղղագրությունը փոխելու վերաբերյալ ձևավորված մտայնության անհիմն լինելը, առաջարկվեց հանրապետության խորհրդարանում այդ հարցի քննարկումը հետաձգել, մինչև այդ՝ հայոց լեզվի ուղղագրության փոփոխման հարցը քննարկելով համաակադեմիական չափանիշներով:

Բաժանմունքի ժողովը քննարկեց ՀՀ ԳԱ և ՀՀ ԳԱ գիտահետազոտական ինստիտուտների կանոնադրությունների, ՀՀ ԳԱ բաժանմունքի և ՀՀ ԳԱ ընտրությունների կանոնակարգերի նախագծերը:

Բաժանմունքի ինստիտուտների տնօրենները հաղորդում տվեցին ինստիտուտներում ՀԳԱ գիտահետազոտական ինստիտուտի կանոնադրության քննարկման արդյունքների մասին:

ՀՀ ԳԱ կանոնադրության, ՀՀ ԳԱ ընտրությունների և բաժանմունքի կանոնակարգերի վերաբերյալ դիտողություններով հանդես եկան Գ. Ա. Բրուտյանը, է. Բ. Աղայանը. Գ. Բ. Ջուճուկյանը, է. Մ. Ջրբաշյանը, է. Ռ. Աբայանը, Ս. Ս. Սարինյանը, Հ. Ս. Թամրազյանը, Ս. Բ. Կապուտիկյանը, Ս. Ա. Արևշատյանը. Լ. Հ. Հախվերդյանը. Վ. Ս. Նալբանդյանը:

Ժողովում լսվեցին մի շարք գիտական զեկուցումներ: ՀՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը հանդես եկավ «Հայագիտության առանձնահատկությունները, արդիական խնդիրները և բաժանմունքի ծրագրերը», ՀՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Ս. Արևշատյանը՝ «Հայագիտական հետազոտությունների ծրագրերը Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում», բան. գիտ. դոկտոր Ա. Գ. Մազոյանը՝ «Երևանի պետական համալսարանի հայագիտական պրոբլեմների լաբորատորիայի գործունեությունը և հեռանկարները», ՀՀ ԳԱ ակադեմիկոս է. Մ. Ջրբաշյանը՝ «Զուգադիր վերլուծության սկզբունքը 20-րդ դարի հայ գրականության ուսումնասիրության մեջ» թեմաներով: «Հայագիտական հետազոտական ծրագրերի իրականացումը ՀԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում» թեմայով հանդես եկավ փիլ. գիտ. դոկտոր Ա. Մ. Էկմալյանը. իսկ ՀԳԱ թղթակից անդամ Լ. Հ. Հախվերդյանը՝ «Ճարտարապետությունը հայագիտության համակարգում» թեմայով: Բան. գիտ. դոկտոր Վ. Ս. Ներսիսյանի զեկուցման թեման էր «Հայ հին գրականության ուսումնասիրության վիճակն ու խնդիրները», իսկ փիլ. գիտ. դոկտոր Հ. Ղ. Միրզոյանինը՝ «Հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրության արդի վիճակը Երևանի պետական համալսարանում և հետագա անելիքները»: «Թարգմանությունը և հայ ազգային մշակույթը» թեմայով զեկուցում կարդաց բան. գիտ. դոկտոր Լ. Մ. Մկրտչյանը: ՀՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ջաճուկյանը հանդես եկավ «Արցախ (Ղարաբաղի) բարբառի կազմավորման մասին» զեկուցմամբ, ճարտ. թեկնածու Մ. Մ. Հասրաթյանը՝ «Արցախի ճարտարապետական դպրոցը», իսկ արվ. թեկնածու Մ. Մ. Ղազարյանը ելույթ ունեցավ «Արտասահմանյան ժամանակակից արվեստաբանները հայ դիրքի մասին» զեկուցմամբ: Փիլ. գիտ. թեկնածու Գ. Ա. Գաղոսյանի զեկուցման թեման էր՝ «Ազգերի սոցիոլոգիայի տեսության աշխատման հարցի մասին»: